Армянский Вестник

июль 2009 г. №33

Информационно-аналитическая газета общественной организации «Союз Армян Украины». Издается с октября 2006 года.

Сильное средство, связывающее родину и диаспору

Интервью председателя Союза журналистов Армении, члена Общественного совета при Президенте Армении Астхик Геворгян

— Многоуважаемая госпожа Геворгян! Известно, что Вы на протяжение многих лет возглавляете Союз журналистов Армении. Являясь многолетним мудрым организатором и координатором работы журналистов, как Вы оцениваете в эти тяжелые времена роль прессы в деле сохранения армянской идентичности в диаспоре?

— Недавно состоялось IV всеармянское собрание представителей армянских СМИ, которое проходило в рамках фестиваля «Один народ – одна культура». Правительство подчеркивает важность взаимодействия Армения-диаспора, об этом в частности свидетельствует новообразованное Министерство диаспоры. Следовательно, неоценимым и бесспорным представляется роль СМИ в постепенно развивающемся взаимодействии. Несмотря на современные достижения техники, армянские СМИ плохо взаимодействуют между собой, обратная связь также слабая, и зачастую СМИ диаспоры действуют несогласованно.



Наши многочисленные общие задачи: мировое признание геноцида, признание самоопределения Нагорно-Карабахской республики, сохранение армянской идентичности, родного языка и культуру, – вследствие нахождения армян в диаспоре эти незабвенные национальные ценности подвергнуты опасности утраты, в силу чего армянские СМИ должны уделять огромное внимание этим вызовам тысячелетия. Нельзя забывать завет великого поэта, актуального для армян во все времена: «Наша сила – в нашем единстве».

— Вы отметили большую роль прессы, но какие конкретно шаги предпринимаются для взаимодействия, какие новые методы и предложения существуют и какая основная проблема СМИ и журналистов диаспоры?

— Всегда надо помнить и на родине, и в диаспоре, что наши СМИ и журналисты являются для нашего народа, нашей страны, а также истории прессы правдивыми летописцами. Они своими усилиями и чувством гордости способствуют процветанию Армении, сохранению идентичности и родного языка. Армения и диаспора совместными усилиями должны укрепить нашу государственность, построить наш общий дом – новую Армению. Думаю, что каждый армянин должен жить Арменией и для Армении, поскольку Армения не географическая территория, а родина всех армян. Сегодня как никогда армянская пресса обязана постоянно озвучивать наше единство и призывать к объединению. Без совместной и последовательной работы руководителей СМИ Армении, Карабаха и диаспоры мы не сможем осуществить весьма сложные национальные задачи и не сможем противостоять новым.

— Известно, что при Президенте Армении сформирован Общественный совет, и Вы являетесь одним из 12 ее почетных членов. Каким образом Вы совмещаете эту новую работу, какие стоят задачи перед Общественным советом?

— Безусловно, сложно, однако если ты гражданин своей страны и душа болит за свой народ, ради интересов родины необходимо в себе находить внутренние усилия и все делать для полезной работы. Новая работа требует большой отдачи и ответственности. Я согласилась, поскольку она общественная. Собственно говоря, новообразованный совет находится в стадии становления, но уже чувствуется, что совершаются последовательные шаги. Избираются председатели комиссий, люди, имеющие большой опыт, которые свои способности и возможности готовы использовать ради национального дела. Формирующийся Общественный совет в будущем воплотится в желанный мост между властью и общественностью.

— Вы отметили, что во время сентябрьского собрания обстоятельно обсуждался вопрос современных СМИ. Скажите, пожалуйста, кто был участником собрания?

— Я уже отмечала, в каком русле прошло собрание армянских СМИ, на котором принимали участие представители фактически всех армянских диаспор, известные личности, редакторы из США, Ливана, Индии, Кипра, Египта и стран Ближнего Востока, конечно, всех перечислить невозможно. Думаю, что в будущем и ваша газета последовательно воплотится в символ сохранения армянской идентичности, языка и культуры.

— Союз журналистов Армении чем может быть полезным в данном вопросе? В СЖА существуют члены, которые имеют желание работать в Украине и своим профессионализмом быть полезными проживающим в Украине своим соотечественникам.

— Вопрос довольно уместный и является одним из острых для диаспоры. Как Дамоклов меч опасность висит над головами наших соотечественников, проживающих в диаспоре. Изучение армянского языка в воскресных школах, разных учреждениях и через газеты играет большую роль в деле самосохранения армянской идентичности. Безусловно, поощрительна патриотическая деятельность, которая совершается в общинах Украины. Касательно недостаточности армянских профессиональных журналистов, то данный вопрос существует не только в Украине, но и во всей диаспоре. Этой проблеме во время собрания уделялось особое внимание, и было принято решение обратиться в Министерство диаспоры с просьбой организации профессиональных курсов для журналистов диаспоры. В целях осуществления данной работе СЖА готов подключить преподавателей вузов, редакторов газет, заслуженных журналистов СЖА и содействовать таким курсам, на которые будут приглашены журналисты диаспоры.

Беседовала Медеа Атян.



Встреча журналистов диаспоры с Президентом и Католикосом

ЗНАКОМСТВО

В Украине существует 26 армянских общин и более полмиллиона армян. В этих общинах много деятельных людей и настоящих патриотов. Благодаря их усилиям созданы молодежные организации, танцевальные ансамбли (профессионалы, которые часто становятся лауреатами всеукраинских конкурсов). Газета САУ «Армянский Вестник» издается с 2006 г. на русском и украинском языках, а с начала 2009 года материалы на армянском языке значительно увеличились. В стране издаются также газеты «Арагац», «Ай терт», «Канч». В Крыму благодаря содействию местной общины публикуется журнал «Масяц агавни» и выходят телепередачи, которые ведет мой сокурсник и деловой друг, профессиональный журналист Ваган Вермишян. Около 10 лет в Одессе в эфир выходит телепередача «Армянский час» на русском и армянском языках, под руководством директора телекомпании АМС Артема Караджяна. Он одновременно возглавляет Бюро журналистских расследований. Однако в Украине довольно мало армянских профессиональных журналистов.

СПРАВКА

С 2009 года газета САУ «Армянский вестник» по адресной рассылке доходит до своих читателей в таких странах как Армения, Россия, США, Бельгия, Голландия, Франция, Грузия.

До конца текущего года планируется набрать штат собственных корреспондентов в Западной Европе, России и Армении.

ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՏ ԽՈՐ ԱՐՄԱՏՆԵՐ ՈՒՆԻ

Հայաստանում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲՈԺԿՈՅԻ և Ուկրաինայի Հայերի Միության «Արմյանսկի վեստնիկ» թերթի գլխավոր խմբագիր ՄԵԴԵԱ ԱԹՅԱՆԻ հարցազրույցը



Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲՈԺԿՈ

– Իմ առաջին հեռախոսազանգին Դուք պատասխանեցիք մաքուր, գրական հայերենով: Ինձ համար դա անակնկալ էր. սկզբում զարմացած էի, հետո՝ հիացած ... Որտե՞ղ և ե՞րբ եք սովորել այդքան գեղեցիկ խոսել հայերենով:

– Ինձ բախտ է վիճակվել միաժամանակ սովորել Կիևի և Երևանի պետական համալսարանների բանասիրական ֆակուլտետներում: Իսկ ինչու՞ եմ ընտրել հատկապես հայոց լեզուն և Հայաստանը: Վաղուց մեծ հետաքրքրություն ունեի դեպի այս զարմանալի երկիրը: Դեռևս պատանեկան տարիներին կարդացել եմ Սիլվա Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» գիրքը: Ես տպավորված էի այդ գրքով ու ինձ շատ էր հետաքրքրում, թե այդ ի՞նչ ժողովուրդ է հայ ժողովուրդը, որ այդպիսի ճակատագիր է ունեցել և ի՞նչ խոր արմատներ ունի պատմության մեջ, ինչպե՞ս է կարողացել դարերի փորձանքների ու փորձությունների միջով անցնել, դժվարին պայմաններում ստեղծել տպավորիչ գլուխգործոցներ՝ թե ճարտարապետության, թե՛ երաժշտության ու գիտության, թե արվեստի ու գրականության բնագավառներում:

Եվ այսպես, հայագիտությունը դարձավ իմ կյանքի իմաստը: Ես սովորել եմ ոչ միայն աշխարհաբարը, գրաբարը, արևմտահայերենը, այլև՝ մտածում, կարդում ու թարգմանում եմ հայերենից-ուկրաիներեն և կարծում եմ, որ նման մասնագետներ պետք են Հայաստանին և Ուկրաինային, քանի որ մեր երկրները կապված են դարավոր կապերով :

– Դուք ասացիք, որ զբաղվում եք թարգմանությամբ: Պատմեք, խնդրեմ,Ձեր թարգմանչական աշխատանքների մասին:

– Համալսարաններն ավարտելուց հետո ես աշխատել եմ որպես լրագրող «Գրական Ուկրաինա», իսկ հետո «Վսեսվիթ» /Համաշխարհ/ ամսագրում և զուգահեռ զբաղվում էի հայագիտությամբ, հայերեն-ուկրաիներեն թարգմանությամբ: Այդ տարիներին իմ թարգմանությամբ լույս են տեսել Վարդան Վարդանյանի «Կոմիտաս» վիպակը, որն Ուկրաինայում առաջին գիրքն էր (ի դեպ, քանի որ այս տարի լրանում է Կոմիտասի 140 ամյակը, ցանկալի կլիներ, որ այն վերահրատարակվեր, քանի որ Կոմիտասն այնպիսի հսկա է երաժշտության մեջ, որի մասին անհրաժեշտ է, որ Ուկրաինայում իմանան: Առանց Կոմիտասի երաժշտությունը հասկանալու՝ դժվար է ճիշտ ըմբռնել հայկական երաժշտությունը):

Իմ թարգմանությամբ լույս են տեսել Հրանտ Մաթևոսյանի, Աղասի Այվազյանի, Մուշեղ Գալշոյանի, Րաֆֆու և այլոց գործերը: Իսկ ահա արդեն մի քանի տարի է, ինչ ուկրաինական հրատարակչություններից մեկում է գտնվում «Սասունցի Դավթի» իմ թարգմանությունը: Դա ըստ էության էպոսի վերամշակված տարբերակն է: Ցանկալի կլիներ, որ այդ հրատարակությունը լիներ գունազարդ, ինչն ընթերցողին կգրավեր նաև իր գեղարվեստական ձևավորմամբ: Չէ՞ որ այս թարգմանությունը նախատեսված է առաջին հերթին պատանի ընթերցողի համար: Կհարցնեք. ինչու՞: Որովհետև, որպես կանոն, մեր հիշողության մեջ ամենից լավ պահպանվում է այն, ինչ կարդացել ենք մանուկ և պատանի հասակում. ինձ համար՝ Րաֆֆի, Ժյուլ Վեռն, Ալեքսանդր Դյումա, Վալտեր Սկոտ, Գրիմ Եղբայրներ, Շառլ Պերո և այլն:

– Արդեն 15 տարուց ավելի է, մեր ընտանիքն ապրում և աշխատում է Օդեսայում: Իրերի բերումով Ուկրաինայի ողջ տարածքում, շատ եմ տեսել տարբեր դարերում կառուցված հայ Առաքելական եկեղեցիներ...

Ըստ Ձեզ, իրո՞ք հայ-ուկրաինական բարեկամությունը խոր արմատներ ունի:

– Հայ ժողովուրդն ինքնատիպ ժողովուրդ է: Նրա առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրա զգալի մի հատվածն ապրում է իր հայրենիքի սահմաններից դուրս: Նրա տարաբնակեցումը, ինչպես պատմական օրհասական պահերին, այնպես էլ այժմ, զանազան հանգամանքների պատճառով՝ ստիպել է, որ նրանք սփռվեն աշխարհով մեկ: Եվ այժմ դժվար թե աշխարհում գտնվի մի երկիր, որտեղ հայկական համայնք չլինի: Հնդկաստան և Եթովպիա, Լիբանան ու Սիրիա, Արգենտինա և Բրազիլիա, Հունաստան ու Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա ու եվրոպական շատ երկրներ՝ բոլորը չես թվարկի: Սրանց շարքում իր ուրույն տեղն ունի Ուկրաինան, որի տարածքում հայերը հայտնվել են դեռևս 11-րդ դարում՝ փրկվելով թուրք-սելջուկների ավերիչ արշավանքներից:

Վայելելով աշխատասեր ու դինամիկ ազգի համբավ, հայերը արագ հարմարվում էին տեղական պայմաններին, դրսևորելով իրենց որպես հմուտ արհեստավորներ և հաջողակ վաճառականներ: 13-14-րդ դարերում իրենց բնակատեղիները կազմավորելով Գալիցկո-Վոլինյան իշխանապետության այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են՝ Լվովը, Լուցկը, Վլադիմիրը: Նրանք կարճ ժամանակահատվածում իրենց ձեռքում կենտրոնացրին ուկրաինական հողերի և Մերձավոր ու Միջին Արևելքի միջև ընթացող առևտուրը: Եվ պատահական չէր, որ 17-րդ դարի ձեռագիր փաստաթղթերից մեկի վկայությամբ վաճառականների կողմից Արևելքից ներկրվող ապրանքները կոչվում էին «Հայկական»:

Բազմաթիվ փաստաթղթեր վկայում են, որ հայկական գաղթօջախներն ուկրաինական տարածքներում օգտվել են որոշակի ինքնավարությունից (տե՛ս Կազիմիր Գ-ի հավաստագիրը 1415թ. ապրիլի 3-ին Վլադիսլավ Բ-ի կողմից հայկական համայնքին իրենց իրավունքներից օգտվելու հնարավորություն տալու մասին), հաճախ ստացել են բազմաթիվ այլ արտոնություններ, առանձնապես առևտրի մեջ (տե՛ս Սիգիզմունդ Ա թագավորի 1523 թ. ապրիլի 11-ի հրովարտակը):

Մի բնորոշ մանրամասն ևս: Երկար ժամանակ պետականություն չունենալով, ճակատագրի բերումով աշխարհի ինչ ծայրում էլ որ հայտվել են հայերը, կարծես թե, ղեկավարվելով ինչ-որ բարձրագույն բնազդով, հիմնականում ամենուրեք ինքնակազմավորվել են ազգային համայնքների՝ որպես կանոն, հայկական եկեղեցու շուրջը և բացել հայկական դպրոցներ: Օրինակ, Լվովյան համայնքի ավագանու խորհրդի որոշման մեջ հստակ շեշտվում էր, որ «մեր երեխաները տարրական կրթություն պետք է ստանան մեր մայրենի լեզվով և միաժամանակ լատիներենով»:

Պետք է ասել, որ շնորհիվ ազգային եկեղեցու, որը հանդես էր գալիս որպես կապակցող գործոն, ինչպես նաև դեռևս 405 թ. Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած սեփական ազգային գրով, հայերը աշխարհի տարբեր ծայրերում, անկախ բոլոր փորձություններից, պահպանվել են առ այսօր՝ որպես ազգ: Ուկրաինայի արխիվներում պահպանվող միայն Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի ակտերը կազմում են հազարավոր էջեր:

Եվ նման բազմաթիվ փաստեր վկայում են, որ հայ-ուկրաինական պատմական կապերն ունեն բավականին խոր արմատներ:

– Օրերս այցելեցինք Եռաբլուր: Արցախի հերոսամարտերում զոհված ազատամարտիկների շիրիմների 710 զոհվածների թվում տեսանք ուկրաինացիների, ռուսների և այլոց շիրմաքարեր: Ի՞նչ կասեիք այդ կապակցությամբ:

– Ես ուսումնասիրում էի պատմական գրավոր հուշարձանները, հատկապես 17-րդ դարի Ուկրաինայում ազատագրական շարժումների վերաբերյալ և գիտեմ, որ շատ հայեր էին մասնակցել Ուկրաինայի ազատագրական պայքարին `Բոգդան Խմելնիցկու գլխավորությամբ կազակների մասնակցությունը Խոտինի 1621 թ. ճակատամարտում և ուկրաինա-լեհական միացյալ բանակը կանգնեցրեց թուրք-թաթարական արշավանքը: Այս ճակատամարտում իր խիզախությամբ առանձնապես աչքի է ընկնում հետման Պ. Սագայդաչնին: Նրա մասին գրում է հայ հեղինակ Հովհաննես Կամենացին, որի մականունը նշում է նրա բնակության վայրը՝ քաղաք Կամենեցը (տե՛ս Յովհաննէս Կամենացի «Պատմութիւն Խոթինու», Ե. 1964): Իսկ հայկական տարեգրությունները, որոնք գրվում էին Ղրիմում, իրենց հերթին բազմաթիվ վկայություններ են պարունակում զապորոժցիների դեպի ղրիմյան ու անատոլիական ափերը կատարած հաղթական արշավանքների մասին: Առանձնապես կարևորն այն է, որ Ուկրաինայում գտնվող հայկական պատմական աղբյուրները, թույլ են տալիս ընդգրկուն պատկերացում կազմել մի քանի հարյուրամյակների ընթացքում ուկրաինացիների ու հայերի զարգացող բարեկամական փոխհարաբերությունների մասին, որոնք մեկ անգամ չէ, որ միմյանց աջակցել են ծանր ժամանակահատվածներում: Կազակական զորքերի մեջ շատ էին հայազգի մարտիկներ, որոնք աչքի էին ընկնում իրենց քաջությամբ ու ռազմավարական հմտությամբ: Եվ իզուր չէր, որ նրանցից շատերը, այդ հատկությունների շնորհիվ հասել էին նույնիսկ գնդապետի կոչման: Մեզ հայտնի է նաև, որ հայերը Հայրենական Մեծ պատերազմում քաջաբար են կռվել Ուկրաինայի ազատագրման համար: Միայն Կիևի կռիվներում 23 հայ զինվորներ արժանացել են հերոսի կոչման:

Բնական է, որ այն ուկրաինացիները, որոնք կապված են եղել Հայաստանի հետ, նույնպես անտարբեր չէին կարող լինել հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Երևի իրենցից ամեն մեկն իր պարտքն էր համարում վարվել այնպես, ինչպես իր խիղճն էր թելադրում:



Մ.Ի.Կիչմարի շիրիմը Եռաբլուրում

– Հայաստանում կա՞ ՈՒկրաինական համայնք:

– Հայաստանի ՈՒկրաինական համայնքը բաղկացած է հիմնականում հասուն տարիքի կանանցից, որոնք իրենց ժամանակին ամուսնացել են Ուկրաինայում սովորող կամ ծառայող հայ երիտասարդների հետ: Այս առումով ես հիացած եմ, որ չնայած 90-ական թվականների ծանրագույն պայմաններին, նրանք մնացին կիսավեր Հայաստանում, որպեսզի կիսեն իրենց ամուսինների ճակատագրերը՝ ճիշտ ինչպես Եղիշեի մոտ: Հիշենք նրա երկի հանճարեղ հատվածը, «Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք...», որտեղ գովերգվում է հայ կանանց արիությունն ու արժանապատվությունը:

Պետք է ասեմ, որ Հայաստանում ուկրաինացիների «Ուկրաինա» ֆեդերացիան, որը կազմավորվել է 1995 թ. ակտիվ գործունեություն է ծավալում: Այն ուղղորդված է հայաստանաբնակ ուկրաինացիների պահանջմունքների բավարարմանը, ուկրաինական մշակույթի, ավանդույթների և սովորույթների պահպանմանը: Ֆեդերացիայի ղեկավարությամբ ստեղծվել են սպորտային բաժանմունքներ՝ Վանաձորում, Գյումրիում, Հրազդանում, Իջևանում, Սևանում: Ֆեդերացիային կից կազմավորվել է 4 սիրողական խումբ՝ «Դնիպրո» երգչախումբը, «Վերբիչենկա» վոկալ համույթը, «Ձվինոչոկ» վոկալ և «Մալյատկո» պարային մանկական համույթները:

Արդեն մի քանի տարի է՝ «Ձվինոչոկ» մանկական համույթը մասնակցում է «Արտեկ»-ում անցկացվող «Մեր երկիրը Ուկրաինան է» միջազգային մրցույթ-փառատոնին, երեք անգամ արժանացել է դափնեկրի կոչման:

Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիան ունի իր տպագիր «Դնիպրո-Սլավուտիչ» թերթը, որը լույս է տեսնում ամիսը մեկ անգամ՝ ուկրաիներեն և հայերեն լեզուներով:

– Ինչպիսի՞ն են հայ-ուկրաինական քաղաքական հարաբերությունները և ի՞նչ հեռանկարներ կան տեսադաշտում:

– Կարծում եմ, որ մեր երկրների միջև քաղաքական հարաբերությունները հաջող են ընթանում: Այսօր երկու երկրների կողմից էլ հարաբերությունների խորացման նշանակալի ներուժ և փոխադարձ հետաքրքրություն կա: Հիմքում ուկրաինացի և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունն է:

Ե՛վ Հայաստանի, և՛ Ուկրաինայի համար, հաջողության գրավականը ժողովրդավարության հաստատման ու ֆինանսական ռեֆորմների ճանապարհի անցնելն է, Եվրոմիության լիիրավ անդամ դառնալը, ինչպես նաև առևտրատնտեսական համագործակցության փոխադարձ շահագրգռվածությունը:

– Հայերենի Ձեր հիանալի իմացության համար ցանկալի է, որ այս հարցազրույցը մեր թերթում տպագրենք և՛ հայերեն, և՛ ուկրաիներեն, և՛ ռուսերեն: Արդյո՞ք դեմ չեք:

– Որքան ինձ հայտնի է, Ուկրաինայում կամ Ռուսաստանում ապրող Ձեր որոշ հայրենակիցներ հայերեն խոսել չգիտեն: Անկեղծ ասած, դա ինձ տարօրինակ է թվում: Լեզուների իմացությունը շատ կարևոր է բոլոր ժամանակներում և ամենուր՝ հատկապես 21-րդ դարում: Սակայն մայրենի լեզուն ինչպե՞ս կարելի է չիմանալ: Ժողովրդական առածն ասում է. «Ինչքան լեզու գիտես, այնքան էլ՝ մարդ ես...»: Բայց կա նաև ընդհանուր մի լեզու, որ ցանկալի է իմանա ամեն ոք: Դա մարդասիրության ու խաղաղության, սիրո ու մշակույթի լեզուն է, որի իմացությունն անհրաժեշտ է յուրաքանչյուր ազգի, ինչպես նաև համայն մարդկության համար...

Եվ օգտվելով առիթից ես ողջունում եմ այն փաստը, որ Ուկրաինայի Հայերի Միության «Հայկական լրաբեր» թերթում արդեն մեծ տեղ է հատկացվում հայերեն լեզվով գրված նյութերին ու հոդվածներին; Հաջողություն եմ ցանկանում այդ կարևոր հայրենասիրական ու հայասիրական գործում, որ կատարում է խմբագրությունը: Կարևոր է նաև, որ խմբագրությունում աշխատեն բանիմաց, հետաքրքրասեր, նրբանկատ մարդիկ, որոնք քաջ գիտակցում են իրենց վրա դրված վեհ առաքելության նշանակությունը:

-Անչափ ներշնչված և զգացված ենք:
-Շնորհակալություն:

Посол Украины в Армении Александр Божко в беседе с главным редактором «Армянского Вестника» отметил глубокие исторические и культурные корни, связывающие два народа на протяжении многих столетий. Александр Божко рассказал о своем литературном творчестве, связанном с переводами произведений армянских классиков на украинский язык, и особо выделил перевод эпоса «Давид Сасунский», который, к сожалению, несколько лет находится в одном из украинских издательств. Посол коснулся истории армянских общин Украины, обращая внимание на вековую историю, права самоуправления, архитектурное наследие, весомую лепту в развитии торговли, армян-казаков, входивших в армии гетманов П. Сагайдачного и Б. Хмельницкого, а также ценность армянских летописцев в истории. Александр Иванович рассказал об украинской общине в Армении, о созданной в 1995 г. украинской федерации «Украина», которая ведет активную культурно-просветительскую деятельность, о существовании украинского хора «Дніпро», детского ансамбля «Дзвіночок», ансамбля украинской песни «Вербиченька», детского хореографического ансамбля «Малятко», а также ежемесячной газете «Дніпро-Славутич».

ПОДПИСАТЬСЯ НА ГАЗЕТУ МОЖНО
В ЛЮБОМ ОТДЕЛЕНИИ СВЯЗИ «УКРПОШТА».
ПОДПИСНОЙ ИНДЕКС: 96301

ՆՈՐ ՄՏԱՀՂԱՑՈՒՄ

«ԾՆՈՂՆԵՐԻ ԱՅԳԻ»

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայ Առաքելական եկեղեցու և մշակույթի կենտրոնի բակի մի գողտրիկ անկյունում բացվեց, այսպես կոչված«Ծնողներիայգի»:Սադարձյալ Կանանց միության խորհրդի նոր նախաձեռնության արդյունքն է, նոր մտահղացման ծնունդ: Բոլորովին վերջերս կանանց խորհրդի նիստում քննարկվեց այդ նոր մտահղացումը (հեղինակ և նախաձեռնող, խորհրդի նախագահ Աննա Գևորգյան) ու անմիջապես խոսքը վերածվեց գործի: Արագ կարգով համախմբվեցին բոլոր ուժերը՝ ֆինանսական, տնտեսական դիզայներական-ձևավորման, աշխատանքային –կազմակերպչական և բացարձակապես մի քանի օրերի ընթացքում արդեն պատրաստ էր «Ծնողների այգին»:

Սա նույնպես հայկական ավանդույթների խոր արմատներ ունի՝ խոնարհ հարգանք ավագների հանդեպ: Այն նախատեսնված է հայրիկների ու մայրիկների, պապիկների ու տատիկների և այն անձանց համար,ովքեր ցանկություն ունեն իրենց ազատ ժամանակն ու հանգիստն անցկացնելու բնության այս հրաշալի վայրում՝ ծովի ափին, հայկական եկեղեցու և հոյակերտ մշակույթի կենտրոնի հարևանությամբ: Հապա «Ծնողների այգու» նույնպես հրաշալի ու ճաշակով ձևավորու՞մը: Դիզայներ տիկին Աննան մշակույթի կենտրոնի շինարարության ավարտից հետո թույլ չէր տվել դեն նետելու թափոնները՝ ոչ պիտանի քարերի, փայտի, մարմարի կտորտանքները: Դրանցով այգում զովաշունչ ծառերի ներքո ստեղծվեցին հայկականնկոլորիտարտահայտողպատկերներ, մանրակերտեր, կառուցվեցին երևանյան մայր – հրապարակի երգող, գունավոր շատրվանի օրինակով գեղեցիկ շատրվան, քարակերտ, նաև ծաղկաշատ զբոսուղիներ, տեղադրվեցին հանգստի տաղավարներ, սեղան-աթոռներ, տրամադրվեցին նարդի, շախմատ և այլ խաղատեսակներ:

Հունիսի 21-ին «Ծնողների այգու» բացման հանդիսավոր արարողությունը Սուրբ հայր Լևոնի օրհնանքից և ողջույնից հետո Օդեսայի համայնքի նախագահ Սամվել Տիգրանյանը և եկեղեցական խորհրդի ատենապետ Վանիկ Երանոսյանը կտրում են բացման ժապավենը: Ներկաների ջերմ ծափերի ներքո՝ բոլորը ողջունում են միմյանց, բացվում են շամպայնները…

Այնուհետև Կանանց խորհրդի անդամ Լորետտա Գրիգորյանցն ասաց.

-Մենք փառք ենք տալիս Աստծուն և մեր երախտագիտությունը հայտնում եղբայրական, բարեկամ Ուկրաինական ժողովրդին ու ղեկավարներին, որ հնարավորություն են տվել իրենց հողում աշխատենք, ստեղծագործենք՝ ապրենք հայավարի,զգանք բույրը հայրենիի և ունենանք մի կտոր մեր փոքրիկ Հայաստանի զգացողությունը:

Մ.ԱԹՅԱՆ
Մշակույթի կենտրոնի կանանց միության խորհրդի անդամ


«Ծնողների այգու» բացման արարողությունից:

Открытие «Родительского сада»

На одном из последних заседаний Одесского женского комитета у госпожи Анны, председателя комитета, возникла идея создания «Родительского сада». Благодаря усилиям автора идеи и ее непосредственному вдохновителю комитет в скором порядке перешел от слова к делу. И вот в воскресенье, 21 июня, во дворе церкви Св.Григория Просветителя состоялось торжественное открытие «Родительского сада», которое согласно традиции и канонам началось с освещения и проповеди архимандрита Левона. Торжественное право отрезать ленты было предоставлено председателю одесской армянской общины Тиграняну Самвелу и председателю церковного приходского совета (атенапету) Ванику Ераносяну.





Армяне Молдавии совершили паломничество к церкви Св. Григория Просветителя

14 июня Армянская Апостольская церковь празднует один из великих праздников – День основания Кафедрального Собора «Катогике» Св. Эчмиадзина. В этот день группа верующих из Молдавии во главе со своим духовным пастырем иеромонахом Сааком Закаряном совершили паломничество к Одесской церкви Св. Григория Просветителя. Паломников приветствовал духовный пастырь одесских армян иеромонах Левон Гулян. Св. литургию служили иеромонахи Левон Гулян и Саак Закарян. После св. литургии Владыка Украинской Епархии Армянской Апостольской церкви архиепископ Григорис Буниатян прочитал проповедь о значении и роли Первопрестольного Св. Эчмиадзина в истории армянского народа и даровал благословение своей пастве. Затем был организован благочинный обед – «матах», который раздавался всем верующим. Совместное празднование большого праздника и паломничество соотечественников из соседней Молдавии к Одесскому храму символизируют двустороннее прекрасное взаимоотношение и хорошую взаимную связь двух общин.



Մեր թերթի լավագույն ընթերցողներից է իրավաբան-երգիծաբան **Գրիգոր Մելիք-Սարգսյանը**;
Հայրենասեր, ազգասեր, մարդասեր ու կատակասեր այս հետաքրքիր անձնավորությունն իր հրատարակած 20 գրքերից մոտ վեց-յոթը հեղինակային ջերմ մակագրությամբ նվիրել է մեր լրատվական կենտրոնին և «Արմյանսկի վեստնիկ» թերթի խմբագրությանը, որոնց կանդրադառնանք առաջիկայում՝ հատկապես երգիծական ստեղծագործություններին, հումորին:

Իսկ այժմ տպագրում ենք հատուկ մեր թերթի համար գրված լուրջ, հայրենասիրական հետևյալ ոտանավորը:

ԵԿԵՔ ԱՊՐԵՆՔ ՀԱՅԱՎԱՐԻ

Երբ որ Աստծո կամքով բարի
Սրտում Հայոց լեռնաշխարհի
Ստեղծվեց հայ ազգը արի,
Հայն ապրում է հայավարի:

Այժմ շեմին բացվող դարի ,
Փորձանքների դեմ վիթխարի,
Որ մեր կյանքը չխաթարվի,
Եկեք ապրենք հայավարի:

Որ երկիրը մեր Նաիրի
Կրկին ծաղկի ու դալարի ,
Հայոց ներուժը վարարի,
Եկեք ապրենք հայավարի:

Որ հայն ապրի մարդավարի,
Իր հայրենի հողը վարի,
Արգելքները հաղթահարի,
Եկեք ապրենք հայավարի:

Որ ոսոխը նենգ ու վայրի
Մեր սուրբ հողը չգրավի,
Բելը Հայկից նետահարվի,
Եկեք ապրենք հայավարի:

Որ մեր ազգը միավորվի
Ավանդույթով Ավարայրի
Եվ պառակտումը դադարի,
Եկեք ապրենք հայավարի:

Հայն հայի հետ սիրով վարվի,
Օտարներով շատ չտարվի,
Հայոց կանանց սիրահարվի,
Եկեք ապրենք հայավարի:

Որ փեշերին Մասիս սարի
Հայը կրկին խրոխտ պարի
Միասնական մի քոչարի,
Եկեք պարենք հայավարի:

Որ փափագը մեր կատարվի,
Հույսն ու լույսը չխավարի
Աստված մեզ միշտ սատարի,
Եկենք ապրենք հայավարի:

ПЕРЕДПЛАТИТИ ГАЗЕТУ МОЖНА
У БУДЬ-ЯКОМУ ВІДДІЛЕННІ «УКРПОШТИ».
ІНДЕКС НАШОЇ ГАЗЕТИ: 96301

«Я народжений у Вірменії, Батьківщина ж моя – Україна й Кривий Ріг»

Форум представників майже усіх національних громад Кривого Рогу відбувся минулої неділі у розважальному центрі «Голлівуд». Нагодою стало вшанування на міжнародному рівні голови вірменської громади, депутата міської ради О. Мкртчяна.

Вів захід А. Аванесян – голова ради всеукраїнських громадських організацій національних меншин при Державному комітеті з питань національностей та релігії, член ради з етно-національної політики при Президенті України. Першим виступив ректор Ванадзорського інституту управління «Санаін» А.Зурабян; звернувшись до історії Вірменії, він наголосив на необхідності нації триматись стрижня, оскільки вірменська діаспора у кілька разів перевершує кількість населення країни. Щороку найвидатніших людей з вірменським корінням відзначають особливо. Цього разу звання почесного професора в галузі економіки, менеджменту і права присвоїли О. Мкртчяну.

Овсепу Гургеновичу вручили червону професорську мантію, диплом, золоту медаль. Після офіційної частини церемонії розпочалась злива щирих вітань. Прекрасні слова на адресу щойно посвяченого професора промовляли народні артисти Вірменії А. Азізян і Д. Саркісян, начальник відділу з питань внутрішньої політики та зв'язків з громадськістю виконкому Криворізької міськради – помічник міського голови А. Полтавець, чільники польської, грузинської, єврейської та інших громад. Рефреном звучало: ця подія є у тім числі й оцінкою, символом національного порозуміння у Кривому Розі. А як висловився один промовець: «Ми – різних національностей, але належимо єдиному місту!».

Багато хто вклонявся О. Мкртчяну за широту душі, меценатські вчинки. Він же сам сказав:

– Я народжений у Вірменії, батьківщина ж моїх дітей – Україна, отже, і моя. Доля України і Кривого Рогу мені вкрай важлива, докладаю максимальних зусиль, щоб криворіжці добре жили, мали широкі можливості працювати й відпочивати, як справді належить європейцям.



Вірменсько-криворізька душа

Спілкування з відомими особистостями зазвичай не просто зав'язати – постає концептуальне: «З чого ж розпочати?!». О. Мкртчян має вдосталь чеснот, але у випадку з ним це вирішується просто. Організатора і голову вірменської громади міста, звісно, слід розпитати про самобутність національної душі.

– Короткою фразою складно передати неповторність національного духу будь-якої нації, – вважає Овсеп Гургенович. – Пошуку точної відповіді на це треба шукати у багатовікових традиціях, фольклорі. Найприкметнішою рисою вірмен, можливо, є гостинність й величезна щиросердність до земляків. Ми взагалі володіємо талантом всюди швидко знаходити людей свого народу. Не лише радо вітати, а дійсно докладати максимум зусиль для взаємної допомоги. Помічаю, як останнім часом такі стосунки відроджуються і поміж українцями. Це прекрасно!

– Розкажіть про себе: як би Вам хотілось, щоб Вас сприймали оточуючі.

– Не звик популяризувати власну персону, проте спробую. Віддаю перевагу мовчазній праці, без вихідних, з ранку до пізнього вечора. Мабуть, найкраща рекомендація про будь-яку ділову людину – створення нових робочих місць. Цим і займаюся.

Початок моєї біографії був звичайним. Народився у Вірменії, у школі серйозно займався боксом, тому обрав фах учителя фізкультури. Якось приїхав до Одеси погостювати. Дуже сподобалось. Далі товариші запросили до Кривого Рогу, місяць не міг знайти сили покинути це чудове місто. Невдовзі знову напросився сюди. Бачачи моє захоплення Кривим Рогом, знайомі прямо запропонували переїхати.

Трапилось це 35 років тому. Підшукав роботу різноробом у їдальні. Мав диплом про вищу освіту, але не цурався найбруднішої праці. Згодом започаткував свою справу.

Завжди кажу: «Вірменія – моя батьківщина, Україна ж – моя улюблена батьківщина». Тут я повністю сформувався, у Вірменії, на жаль, лишились тільки шкільні приятелі, та й тих все менше.

– З чого починалась і що нині представляє собою вірменська громада?

– Необхідність згуртування з'явилась десь у середині 90-х років. З головних причин утворення стало бажання донести землякам думку, що ми живемо не на історичній батьківщині, тому треба шанувати закони і моральні порядки України, та в той же час не «розчинитись», зберегти своє духовне начало. Гідним чином показати «вірменське обличчя», як уміємо трудитись і все найкраще з надбання нашого народу можна лише спільними зусиллями.

Не всі наші етнічні родичі стають членами громади. Перша вимога – приносити суспільну користь, хто шукає легкий шлях, конфліктує із законом – з тим нам не по дорозі. Деякий час навіть тісно співпрацювали з міліцією, допомагали знаходити у своєму середовищі правопорушників. Жодним чином не вважаю це якоюсь зрадою, скоріше, вина повністю лежить на тих, хто бруднить добре ім'я нашого народу.

На сьогодні вірмени чітко організовані, спрямовані на добросовісну працю, тепер ніхто не має нагоди чимось нам дорікнути. Мова не про утвердження певного позитивного іміджу – суть у самому стилі життя.

В один момент я збагнув, що вірмени потроху втрачають національні духовні скарби. Асиміляція, власне, невідворотна, проте цей процес треба контролювати. Дитина, народжена в Україні, повинна таки знати мову, перейняти самобутність батьків – або хоч одного з них. Відверто кажучи, таке спостерігав і за своєю донькою. Не бачив іншого способу зарадити такому об'єктивному явищу, як облаштувати вірменську недільну школу.

Перший потік її учнів майже зовсім не знав вірменської мови. За відносно короткий термін вони освоїли національну грамоту, якщо на розмовному рівні існує простір для вдосконалення, то читають і пишуть вже вільно. Розучуються народні танці, пісні, шиємо традиційні костюми. Спочатку було понад 200 дітей, тепер дещо менше. Навчальну літературу завозимо з Вірменії, учителі – з вищою освітою, здебільшого професійні викладачі вірменської мови та літератури.

– З дітьми зрозуміло, а яку віддушину знаходять дорослі?

– Найчастіше разом відзначаємо свята – українські й вірменські. Наша земля дуже щедра на них, це тішить, водночас, як на мене, надто багато часу відволікає, бо роботу я таки ставлю на провідне місце. Намагаємось дотримуватись релігійних свят, Вірменська апостольська церква існує за григоріанським календарем, тому дати не співпадають із православними, хоча в цілому віра у Христа єдина. Зауважу, що на рідній землі особисто я, напевно, не так би ревно дотримувався обрядів, за даних же обставин будь-яка діаспора мусить якнайретельніше виконувати культурні ритуали. Адже в тім числі і їм завдяки вірмени протягом століть не втратили самоідентифікацію, розпорошившись по світу.

Використовуємо кожен привід зібратись разом, влаштовуємо дитячі концерти, нерідко і дорослі виходять на сцену.



– Настільки відомо, Вірмени протягом тривалого періоду досить гостро конфліктували з деякими кавказькими сусідами. У нинішній час вдалось приборкати давні образи?

– Стосовно Кривого Рогу – цілком і повністю знайшли примирення! Маю багато відданих друзів-азербайджанців, ніякі претензії між нашими народами не стають на заваді особистим стосункам. І на Кавказі ворожнеча давно згасла, хіба що, трапляється, підступні політики роздмухують націоналістичні протистояння.

Менталітет кавказьких народів дуже подібний – усі відкриті, товариські. Недавно довелось почути: «От якби українці так дружно співіснували». Сильно і в українцях проявляється така риса, тільки ж України – майже 50 мільйонів, а населення тих держав усього по кілька мільйонів, там усі процеси значно яскравіше проявляються.

– Ви – відомий меценат. Даруйте за прямолінійність, але навіщо це Вам?

– Прагну не афішувати свою доброчинність. Всевишній бачить, хто чим займається на землі, мені усвідомлення цього досить. До благодійності, мабуть, спонукає християнська мораль. На початку 90-х, коли загальне зубожіння особливо далося взнаки, я мав можливості у своїх кафе і ресторанах запрошувати малоімущих пенсіонерів на безкоштовні обіди. Тоді також часто допитувались, з якою метою це роблю. Ніби обов'язково для доброї справи потрібно шукати причини. Відповідав, що у Вірменії, ще біднішій за Україну, проживають мої родичі, можливо, і їм хтось допоможе, як тут комусь я.

– Як трапилось, що 15-ту школу називають школою Мкртчяна?

– Заходжу до тої школи, мов додому, і учні горнуться, як до рідної людини – мені такої подяки достатньо. Дружба із 15-ю школою розвинулась за збігом обставин. Ставши вперше депутатом міської ради, на дільниці отримав кілька навчальних закладів. Посприяв тій школі у якихось дрібницях, точно й не згадаю, чи дах полагодили, чи труби замінили. Бачу – директор над усе старається для дітей. Написала невдовзі вона заяву про якусь допомогу – і не на моє ім'я. Здивовано запитую: «Як, ви не хочете, щоб я опікувався вашою школою?!» Може, директор не запам'ятала моє ім'я...

Переймаюсь не лише матеріальними проблемами школи. Буває, доводиться і нерадивих батьків виховувати, щоб краще дбали про дітей. Діє Фонд Мкртчяна (років, здається, 13), відмінникам у кінці року вручають в конвертах грошове заохочення. Переконаний, то вагомий стимул для успішного навчання. Завжди готовий дати «моїй» школі що завгодно, від комп'ютерів до ремонту.

Власне, і у депутати пішов для розширення можливостей допомагати людям, особисто мені мандат нічого не приніс – та і не прагнув ніяких персональних вигод. Але коло повноважень для плідної громадської роботи статус депутата значно розширює.

– На Вашу думку як депутата міської ради, які місцеві проблеми потребують негайного вирішення?

